
ՀԱՅ-ԹՈՒՐԵԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1923-1927 ԹԹ.)

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Հայ-թուրքական առևտրատնտեսական առնչությունների պատմության ուսումնասիրությունը նախ և առաջ կարևորվում է այն հանգամանքով, որ որպես Անդրկովկասի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության անդամ ընդգրկված լինելով Խորհրդային Միության կազմի մեջ, Խորհրդային Հայաստանի կառավարությունը շարունակում էր ինչպես Անդրֆեդերացիայի շրջանակներում, այնպես էլ առանձին առևտրատնտեսական որոշ առնչություններ ունենալ և՛ Խորհրդային այլ հանրապետությունների, և՛ հարևան կապիտալիստական երկրների հետ: Մինչև 1927 թ. Անդրկովկասում գոյություն ունեւր արտաքին առևտրի ժողովրդական կոմիսարիատ, իսկ «1927 թ. այն վերածվում է ԽՍՀՄ արտաքին առևտրի անդրկովկասյան լիազորության՝ երկրամասի մնացած ժողկոմատներին հավասար իրավունքներով»¹:

1923-1927 թթ. հայ-թուրքական առևտրատնտեսական առնչությունների համար մեծ խթան հանդիսացավ դեռևս 1921-1922 թթ. այդ երկրի հետ ունեցած առևտրատնտեսական հարաբերությունների ընթացքում Խորհրդային Հայաստանի իշխանությունների կուտակած փորձը:

1922 թ. սեպտեմբերին Ալեքսանդրապոլում բացված մաքսատնից գատ՝ 1920-ական թվականների 2-րդ կեսին սկսում է աշխատել նաև Մարգարայի մաքսատունը, ինչը վկայում է այն մասին, որ Խորհրդային Հայաստանի, իսկ հետագայում նաև ԽՍՀՄ կառավարությունը մեծ նշանակություն էր տալիս Թուրքիայի հետ առևտրին, և նրանց միջև ակտիվ ապրանքաշրջանառություն էր իրականացվում:

Հայ-թուրքական առևտրատնտեսական առնչություններում մեծ դերակատարում ունեւր հատկապես Հայպետառը², որի միջոցով ՀՍԽՀ իշխանությունները երկրի համար անհրաժեշտ ապրանքներ էին ձեռք բերում:

1923 թ. հունվարի 8-ին Հայպետառի կառավարիչ տնօրենը լիազորագիր է տալիս Գրիգոր Օհանջանյանին այն մասին, որ Հայպետառը նրան նշանակում է Կարսում իր ներկայացուցիչ և նրան իրավունք է տալիս ողջ Թուրքիայի տարածքում իրացնել Հայպետառի ապրանքները կամ կանխիկ արտարժույթով, կամ ապրանքափոխանակությամբ: Նրան իրավունք էր տրվում նաև առավելագույնը մեկ ամիս ժամկետով Թուրքիայում պայ-

¹ **Յ. Յ. Գրաբսկի**, Անդրկովկասի արտաքին առևտրական կապերի զարգացումը Անդրֆեդերացիայի ժամանակ (1922-1936 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», № 9, 1968, էջ 62:

² ՀՍԽՀ-ում պետական-կոոպերատիվ առևտուրը տնօրինում էր Հայպետառը, որը 1923 թ. փետրվարի 10-ին վերանվանվեց Հայառի:

մանագիր կնքել ՀՍԽՅ-ից Թուրքիա ապրանքներ արտահանելու և ներմուծելու համար³:

Հայպետառը Թուրքիայում իր գործունեությունն իրականացնում էր հիմնականում մասնավոր անձանց միջոցով և պայմանագրեր էր ստորագրում ՀՍԽՅ սահմանամերձ թուրքական շրջանների վաճառականների հետ:

Յունվարի 24-ին Հայպետառը դիմում է ՀՍԽՅ ներքին գործերի ժողկոմատին՝ խնդրելով թույլատրել Գրիգոր Օհանջանյանին առևտրական բնույթի բանակցություններ վարել թուրքական իշխանությունների ներկայացուցիչների ու վաճառականների հետ, և այդ բանակցություններն ընթանալու էին Մարգարա գյուղում: Գրության մեջ խնդրվում էր նաև թույլատրել Օհանջանյանին անհրաժեշտության դեպքում անցնելու սահմանը Իգդիրի ուղղությամբ⁴:

Իր նշանակումից կարճ ժամանակ անց Օհանջանյանը Հայպետառի վարչությանը տեղեկատվություն է տրամադրում Թուրքիայում իր իրականացրած գործունեության վերաբերյալ: Սա խոսում է այն մասին, որ Օհանջանյանը մեծ պատասխանատվությամբ էր վերաբերվում իր նշանակմանը և լուրջ աշխատանք էր ծավալել արդյունքի հասնելու համար:

Յունվարի 30-ին նա ուղարկում է իր զեկույցը ՀՍԽՅ սահմանակից թուրքական շրջանների հետ արտաքին առևտրի մասին: Չեկույցում Օհանջանյանը նշում էր, որ հունվարի 25-ին ինքը առևտրական առնչությունների վերաբերյալ բանակցություններ էր սկսել Իգդիրի թուրքական իշխանությունների հետ, սակայն պարզվել էր, որ առանց Իգդիրի վաճառականների մասնակցության տեղի իշխանությունները գործնականում ոչինչ չէին անում, այդ պատճառով Օհանջանյանը ստիպված էր եղել անձամբ մեկնել Իգդիր: Առաջին հերթին Օհանջանյանին զարմացրել էր հայկական շուկաների վերաբերյալ թուրք վաճառականների տեղեկացվածության աստիճանը: Նա հայտնում էր, որ տեղում մաքսանենգությունը այնքան էր զարգացած, որ Հայաստանի և Սուրմալուի միջև սահման չէր զգացվում: Բացի այդ, ամբողջ Բայազետի սանջակի, այսինքն՝ Բայազետի, Կաղզվանի և Սուրմալուի հատվածների հացը Հայաստանից էր ներկրվում, իհարկե՝ մաքսանենգ ճանապարհով: Ըստ Օհանջանյանի՝ հայկական կողմի բոլոր ջանքերը՝ նվազեցնելու հացահատիկի գինը, հանդիպում են կազմակերպված մաքսանենգների դիմադրությանը, որոնք իրենց բազաներն ունեին Արաքսի երկու կողմերում գտնվող թուրքական գյուղերում:

Չնայած հայկական ապրանքների զանգվածային ներկրմանը՝ տեղում հացահատիկի, գարու և կերոսինի գները Հայաստանի համեմատ բարձր էին 100, իսկ առանձին վայրերում՝ մինչև 150%-ով: Օհանջանյանի կողմից առաջարկված երկու վազոն սոխը թուրքերը համաձայնվել էին գնել, սակայն պայմանով, որ իրենց վաճառվի նաև հացամթերք: Չեկույցում հայտնում էր նաև, որ Իգդիրի շուկայում սոխի 12 փուլը արժե 1 թուրքական ոսկի լիրա:

Ըստ Օհանջանյանի՝ թուրքերը պատրաստ են հացահատիկ, գարի և կերոսին գնել Հայաստանից, սակայն դրան շատ էր խանգարում այն հան-

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 554, ց. 1, գ. 33, թ. 5:

⁴ Տե՛ս նույն տեղը, գ. 18, թ. 7:

գամանքը, որ Թուրքիայում մաքսային վճարը շատ բարձր էր՝ հայկական ապրանքների արժեքի մոտ 60%-ը:

Կարսում Հայառի ներկայացուցչի կարծիքով, հայկական ապրանքների արտահանումը Սուրմալու Հայաստանի համար ուներ քաղաքական և տնտեսական մեծ նշանակություն: Հարևան շրջանների մահմեդական գյուղացիությունը իրեն չէր պատկերացնում առանց խորհրդային հանրապետությունների հետ կապի: Նրանց տնտեսությունը առանց այդ կապի հնարավոր չէր վերականգնել: Այդ շրջաններում բամբակագործության զարգացումը մեծապես կախված էր Հայաստանի և խորհրդային այլ հանրապետություններում Հայաստանի տնտեսական ներկայացուցիչների միջոցով բամբակի սերմի գնումից և բամբակի բերքի սպառումից: Արտաքին աշխարհի հետ կապը երզրում-Տրապիզոնի միջոցով, ըստ Օհանջանյանի, կարող էր կործանարար լինել նրանց տնտեսության համար:

«Ես գտնում եմ, որ Հայպետառը պարտավոր է օգտագործել այս հարուստ շրջանների առևտրական և տնտեսական հնարավորությունները հայկական շուկաների ներ շրջանակներից դուրս գալու համար: Դրա համար անհրաժեշտ է մշակել այդ շրջաններում գործողությունների ծրագիր, կարգավորել առևտրա-իրավական բնույթի որոշ հարցեր՝ կախված հարևան շուկաներում մեր գործունեության հետ»⁵, - նշված էր զեկույցի վերջում:

Օհանջանյանի զեկույցից պարզ է դառնում, որ թուրքական կողմը ևս չահագորգված էր Հայաստանի հետ առևտրի հարցում, ինչը մեծապես բխում էր նրանց շահերից: Օհանջանյանի զեկույցը կարևոր է նաև այն առումով, որ նա ոչ միայն մանրամասն ներկայացնում է իր գործունեությունը և Հայաստանին հարևան թուրքական շրջաններում տիրող տնտեսական իրավիճակը, այլև ուղիներ է առաջարկում երկկողմ առևտրատնտեսական առնչությունների զարգացման համար:

1923 թ. փետրվարի 3-ին Հայպետառի առևտրի բաժնի վարիչը Օհանջանյանին հրահանգում է շտապ մեկնել Սարդարապատի շրջան՝ գնելու 1500 փուք կորեկ և Սուրմալուի շրջանում եղած ողջ բամբակը. հնարավորության դեպքում բամբակի գնումն իրականացնել ապրանքափոխանակությամբ, հակառակ դեպքում այն ձեռք բերել արտարժույթով⁶:

Շատ հաճախ Հայաստանում կամ Նախիջևանում բնակվող որոշ վաճառականներ նախաձեռնություն էին հանդես բերում՝ պատրաստակամություն հայտնելով միջնորդի դեր կատարել թուրք վաճառականների և Կարսում Հայպետառի ներկայացուցչության միջև:

Փետրվարի 19-ին վաճառականներ Վահան Կանայանը, Հուսեին Ալի Մահմեդ-օղլին և Մաշադի Մամեդ Ալեսկերովը առևտրային պայմանագիր կնքելու առաջարկով դիմում են Հայառին: Պատասխանը չի ուշանում: Հաջորդ օրը՝ փետրվարի 20-ին, Հայառը 12 կետից բաղկացած պայմանագրային նամակ է ուղարկում վերը նշված վաճառականներին: Բերենք այդ պայմանագրի առավել կարևոր կետերից մի քանիսը. 1-ին կետի համաձայն՝ վաճառականները Հայառին վաճառելու էին 500 փուք⁷ բամբակ, որից 300

⁵ Նույն տեղում, գ. 33, թ. 7-7 (շրջերես):

⁶ Տե՛ս նույն տեղը, թ. 9:

⁷ 1 փուքը = 16 կգ:

փութը՝ մաքրած: Բացի այդ, վաճառելու էին 500 փութ այծի կաշի: Բամբակը և կաշին վաճառականները պետք է բերեին նախկին Սուրմալուի գավառից, իսկ այնտեղ մուտքի և ելքի արտոնագրերը տրամադրելու էր Չայառը (կետ 2): Մաքուր բամբակը գնվելու էր փութը 11 ռուբլով, իսկ չմաքրվածը՝ 3 ռուբլի 50 կոպեկով (կետ 3): Բամբակի համար տարաները տրամադրելու էր Չայառը (կետ 5): 6-րդ կետի համաձայն՝ բամբակի և կաշվի հանձնման ժամկետը սահմանվում էր 3 շաբաթ՝ Չայառի՝ վաճառականներին անցագրերը հանձնելու օրվանից: Որպես կանխավճար վաճառականներին տրվում էր 100 փութ կերոսին՝ 1 փութը 3 ռ. 30 կոպեկով (կետ 7)⁸:

Փետրվարի 21-ին Չայառը հեռագիր է ուղարկում ՅՍԽՅ ներքին գործերի ժողովուհանուն և հայտնում, որ Չայառի և Սուրմալուի վաճառականների միջև կնքված պայմանագրի համաձայն՝ նախատեսված բամբակի ներկրման համար խնդրվում է հանձնարարել շտապ կարգով անցաթուղթ տրամադրել վաճառականներ Վահան Կանայանին, Յուսեփին Ալի Մահմեդ-օղլուն և Մաշադի Մամեդ Ալեսկերովին⁹:

Փետրվարի 24-ին Օհանջանյանը Չայառի վարչությանն է ներկայացնում էջմիածնի և Սուրմալուի շրջաններում իր գործունեության մասին զեկույց, որում առաջարկում էր կազմակերպել դեռևս Առաջին հանրապետության օրոք էջմիածնում կուտակված ողջ բամբակի գումը, առևտրական կապեր հաստատել Սուրմալուի շրջանի հետ, Ջանգեզուրի համար պատրաստել և եվլախ կայարան ուղարկել 1500 փութ կորեկ:

Ձեկույցում ասվում էր, որ էջմիածնի շրջանում առկա է 3000 փութ բամբակ, որից 30%-ը՝ մաքրած: Սուրմալուի հետ առևտուրը, ինչպես արդեն վերը նշել ենք, խոչընդոտում էին մաքսանենգները: Օհանջանյանը մեծ աշխատանք էր տարել մաքսանենգությունը արմատախիլ անելու և թուրքիայի հետ աշխույժ առևտուր սկսելու համար: Նա Սուրմալուից կարողացել էր ձեռք բերել 1500 փութ բամբակ, ինչպես նաև աղ և անասուն: Թուրքերը շահագրգռված էին բամբակը վաճառել Չայաստանին, քանի որ չմաքրած բամբակը հնարավոր չէր արտահանել Տրապիզոնով: Այդ պատճառով թուրքերը բամբակի մեկ փութի արժեքը իջեցրել էին՝ մեկ լիրայից հասցնելով մինչև 11 ռուբլու:

Ինչ վերաբերում էր կերոսինին, ապա Օհանջանյանը գտնում էր, որ հնարավոր է Իզդիբում Չայառի ունեցած ողջ խմբաքանակը վաճառել նաև Վանում, Բիթլիսում, սակայն դրա համար նախ անհրաժեշտ էր պարզել հայկական կողմի իրավունքները և ֆինանսական հնարավորությունները, իսկ դա ամբողջովին կախված էր վարչությունից¹⁰:

Սակայն Չայառի ստորագրած ոչ բոլոր պայմանագրերն էին ժամանակին կատարվում: Փետրվարի 20-ին կնքված պայմանագրի իրականացումը ինչ-ինչ պատճառներով հետաձգվում է, և մինչև ապրիլ վաճառականներին չի հաջողվում ներկրել համապատասխան քանակությամբ բամբակ, բացի այդ՝ որպես կանխավճար խոստացված կերոսինի հատկացումը ձգձգվում էր, որն էլ, հավանաբար, պատճառ էր դարձել բամբակի

⁸ Տե՛ս ՅԱԱ, ֆ. 554, ց. 1, գ. 21, ք. 39:

⁹ Տե՛ս նույն տեղը, գ. 18, ք. 11:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, գ. 33, ք. 11-12:

ներկրման ուշացման:

Ապրիլի 14-ին Հայառը դիմում է ներքին գործերի ժողկոմատ՝ խնդրելով թույլատրել Մաշադի Մամեդ Ալեսկերովին և Հուսեին Ալի Մահմեդ-օղլուն Մարգարայի վրայով Իզդիր արտահանել 100 փուֆ կերոսին, 10 շիշ կոնյակ և այլն¹¹:

Սակայն, չնայած գործադրված ջանքերին, պայմանագրի իրականացումը հետաձգվում է ևս 2 անգամ: Նախ՝ մայիսի 5-ին Հայառի կողմից ներքին գործերի ժողկոմատին գրություն է ուղարկվում, որով խնդրվում է Մաշադի Մամեդ Ալեսկերովին և Հուսեին Ալի Մահմեդ-օղլուն երկրորդ անգամ տրամադրել անցաթուղթ՝ բամբակի ներմուծման համար նախատեսված պայմանագրի վերջնական կատարման նպատակով¹²:

Հունիս ամսին, երբ պայմանագրի կատարումը հերթական անգամ հետաձգվում է, Հայառի ղեկավարությունը ճարահատյալ դիմում է նշված վաճառականներին՝ պայմանագրի մեջ փոփոխություններ կատարելու և բամբակի փոխարեն այլ ապրանք ներկրելու առաջարկով:

Հունիսի 26-ին Հայառը նամակ է ուղարկում Վահան Կանայանին, Հուսեին Ալի Մահմեդ-օղլուն և Մաշադի Մամեդ Ալեսկերովին, որտեղ նշված էր, որ կողմերի միջև փետրվարի 20-ին ստորագրված պայմանագրի համաձայն՝ նրանք Հայառին պետք է վաճառեին 300 փուֆ մաքրած և 200 փուֆ չմաքրած բամբակ: Մինչդեռ ներկրվել էր ընդամենը 184 փուֆ մաքրած բամբակ: Փաստորեն դեռևս մնում էր ներկրելու 116 փուֆ մաքրած և 200 փուֆ չմաքրած բամբակ, որի ընդհանուր արժեքը կազմում էր 1984 ռուբլի 80 կոպեկ: Այժմ, ըստ նամակի, մնացած բամբակի փոխարեն Հայառը պատրաստ էր նրանցից գնել կաշի՝ 1 հատը 0,275 չերվոնեց, ընդհանուր՝ 1191 հատ: Հանձնման ժամկետը սահմանվում էր 1 ամիս: Վերջում խնդրվում էր վաճառականներին հայտնել իրենց համաձայնությունը¹³:

Թե ինչպիսին է եղել այս գործարքի հետագա ճակատագիրը, արխիվային փաստաթղթերում ոչ մի տեղեկություն չհաջողվեց հայտնաբերել:

1923 թ. ապրիլի 30-ին Հայառի կառավարիչ-տնօրենի տեղակալ Անուշավան Տեր-Առաքելյանը և քաղաքացիներ Սադիխովը ու Եղյանցը պայմանագիր են ստորագրում բամբակի ձեռքբերման վերաբերյալ: Պայմանագիրը բաղկացած էր 14 կետից: Սադիխովը և Եղյանցը Հայառին վաճառելու էին Թուրքիայից ներկրված առաջին կարգի 200 փուֆ մաքրած բամբակ (կետ 1): 2-րդ կետի համաձայն՝ մեկ փուֆի արժեքը սահմանվում էր 12 ռուբլի: Վճարումը կարող էր իրականացվել ապրանքների տեսքով: Հայառը պարտավորվում էր որպես կանխավճար ամսական նրանց տրամադրել 300 փուֆ կերոսին՝ փութը 3 ռուբլով (կետ 3): Բամբակի համար մաքսային վճարը պետք է կատարեր Հայառը, իսկ կերոսինի համար՝ Սադիխովը և Եղյանցը (կետ 6): 8-րդ կետի համաձայն՝ Սադիխովը և Եղյանցը պարտավորվում էին բամբակը ներկրել պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ 1 ամսվա ընթացքում: Պայմանագիրը կնքվում էր 2 օրինակով. բնօրինակը պահվելու էր Հայառում, իսկ պատճենը՝ Սադիխովի և Եղյանցի մոտ (կետ 14)¹⁴:

¹¹ Տե՛ս նույն տեղը, թ. 9:

¹² Տե՛ս նույն տեղը, թ. 23:

¹³ Տե՛ս նույն տեղը, գ. 21, թ. 40:

¹⁴ Տե՛ս նույն տեղը, գ. 38, թ. 31:

Այս գործարքի հետագա ճակատագիրը ևս հնարավոր չեղավ պարզել արխիվային փաստաթղթերից:

Օհանջանյանի կողմից բարձրացված մաքսանենգության խնդիրը միայն Հայաստանի իշխանություններին չէ, որ անհանգստացնում էր, այլև խիստ անհանգստացած էին նաև Անդրֆեդերացիայի ղեկավար մարմինները: Որպես Անդրֆեդերացիայի անդամ՝ Հայաստանի մաքսատները մտնում էին Անդրֆեդերացիայի գլխավոր վարչության մեջ, և վերահսկողության ուժեղացումը մեծ նշանակություն ուներ նաև Խորհրդային Հայաստանի համար: Մաքսանենգության դեմ պայքարն ուժեղացնելու նպատակով 1925 թ. դեկտեմբերի 7-ին երկրամասում կազմակերպվեց հատուկ հանձնաժողով՝ արտաքին առևտրի ժողկոմ Իվանյանի գլխավորությամբ, որի նպատակն էր ուսումնասիրել երկրամասի բոլոր մաքսատների աշխատանքը, մաքսանենգ ապրանքների բռնագրավման և ներթափանցումը կանխելու միջոցները: 1926 թ. մայիսի 12-ին Իվանյանը զեկուցագիր ներկայացրեց Անդրերկրկոմին ու ժողկոմխորհին, որտեղ նշվում էր, որ մաքսանենգության դեմ պայքարի գործում պետք է մեծ ուշադրություն դարձնել ներմուծվող մաքսանենգ ապրանքներին, քանի որ այդ ապրանքները ներքին շուկայում կարող էին մրցակցել Խորհրդային ապրանքների հետ և իրացվել ավելի բարձր գնով¹⁵:

Այստեղ չենք կարող չանդրադառնալ նաև Լենինականի և Մարգարայի մաքսատների միջոցով երկու հանրապետությունների միջև իրականացվող ապրանքաշրջանառությանը, որը մեծ նշանակություն ունեցավ այդ երկրների տնտեսության զարգացման համար:

1924-1925 թթ. Լենինականի մաքսատան միջոցով Թուրքիայից ներկրվել էր 5065 տոննա ապրանք, իսկ արտահանվել՝ 1370 տ: Մարգարայի մաքսատան միջոցով ներկրվել է 1343 տ, իսկ արտահանվել՝ 209.4 տ¹⁶: Այս երկու մաքսատների տվյալների համեմատությունից երևում է, որ Մարգարայի մաքսատունը իր ակտիվությամբ զիջում էր Լենինականի մաքսատանը, և հիմնականում վերջինիս միջոցով էր իրականացվում ապրանքաշրջանառությունը երկու երկրների միջև: 1924-1925 թթ. Հայաստան է ներկրվել մոտ 4300 տ գյուղատնտեսական արտադրանք, որից՝

ցորեն----- 980 տ,
գարի----- 173 տ,
բամբակ----- 69 տ,
խոտ և դարման----- 3055 տ,
եղջերավոր անասուններ՝ 1546 տ¹⁷:

Կաթնամթերք է ներկրվել 74 տ, կաշի և մորթի՝ 23 տ: Այս ապրանքներից նշված ժամանակահատվածում Հայաստանից չի արտահանվել, ինչը վկայում է այն մասին, որ դրանց կարիքը զգացվում էր Հայաստանում:

Անտառանյութ ներկրվել է 454 տ, արտահանվել՝ 8 տ:

Հանածոներ արտահանվել է 1309 տ, որից՝

նավթ ----- 1259 տ,
ցեմենտ ----- 50 տ:

¹⁵ Տե՛ս **Յ. Յ. Գրաբսկի**, նշվ. աշխ., էջ 63-64:

¹⁶ Տե՛ս «Խորհրդային Հայաստանը թվերով (1923-1927 թթ.)», վիճակագրական տեղեկատու, Թիֆլիս, 1928, էջ 234:

¹⁷ Խոշոր եղջերավոր անասունների մեկ գլխի միջին քաշն ընդունված էր 246 կգ, մանր եղջերավորներինը՝ 33 կգ:

Այդ նույն ժամանակահատվածում Հայաստանից արտահանվել է ընդամենը 3 տոննա գյուղարտադրանք:

1925-1926 թթ. Թուրքիայի հետ ապրանքաշրջանառության ծավալների մեջ փոփոխություն է նկատվում տնտեսության բոլոր ոլորտներում: Ներկրվում է մոտ 630 տ բամբակ, ինչը նախորդ տարվա համեմատ մոտ 10 անգամ ավելին էր: Այստեղ հետաքրքիրն այն է, որ Խորհրդային Հայաստանն այդ նույն ժամանակահատվածում Ռուսաստան էր արտահանում մոտ 3400 տ բամբակ: Փաստորեն կարելի է եզրակացնել, որ Ռուսաստան էր արտահանվում նաև Թուրքիայից ներկրված բամբակը: Թուրքիայից բամբակի ներկրման ծավալները պահպանվեցին նաև 1926-1927 թթ. առաջին կիսամյակում, ու թեև 1925-1926 թթ. համեմատ ծավալները մի փոքր նվազեցին, այնուամենայնիվ 1924-1925 թթ. համեմատ մոտավորապես 8 անգամ ավելի էին:

1924-1925 թթ. համեմատ 1925-1926 թթ. մոտավորապես 200 տոննայով ավելացավ Թուրքիայից ներմուծվող խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը՝ հասնելով 1780 տոննայի, իսկ արդեն 1926-1927 թթ. առաջին կիսամյակում անասունների ներմուծման ցուցանիշը կտրուկ անկում ապրեց՝ իջնելով մինչև 753 տոննայի:

1925-1926 թթ. և 1926-1927 թթ. առաջին կիսամյակում Թուրքիայից ներմուծվում էր կաշի և մորթի: 1925-1926 թթ. ներմուծվել է 40 տ, իսկ 1926-1927 թթ. առաջին կիսամյակում ներմուծման ծավալները նվազել են՝ հասնելով 14 տոննայի: Հետաքրքիր է այն փաստը, որ նույն ժամանակ Հայաստանից Ռուսաստան էր արտահանվում գրեթե նույն քանակությամբ մորթի և կաշի: Ներմուծվող և արտահանվող թվերի համադրությունից կարելի է եզրակացնել, որ Հայաստանից Ռուսաստան էր արտահանվում նաև Թուրքիայից ներկրված մորթին և կաշին:

1925-1927 թթ. Հայաստանից Թուրքիա է արտահանվել մոտավորապես 4000 տ նավթամթերք, 600 տ ցեմենտ, ավելի քան 70 տ օճառ և 300 տ զանազան արդյունաբերական ապրանքներ¹⁸:

Ամփոփելով պետք է նշել, որ Խորհրդային Հայաստանի իշխանությունները Հայառի միջոցով մեծ աշխատանք էին ծավալել Թուրքիայի հետ առևտրատնտեսական հարաբերությունների հաստատման ուղղությամբ: Սա հնարավորություն էր տալիս Թուրքիայի՝ Հայաստանին սահմանամերձ շրջաններում իրացնել հայկական գյուղատնտեսական ապրանքները, հատկապես ցորենը, և այնտեղից ներկրել բազմապիսի ապրանքներ, մասնավորապես աղ և բամբակ: Խորհրդային Հայաստանի հետ առևտրատնտեսական հարաբերությունների հաստատման և զարգացման գործում հետաքրքրված էին նաև սահմանամերձ թուրքական շրջանների ղեկավարները և տեղի առևտրականները, քանի որ նրանց արտադրած բամբակը ապրանքային տեսք չունենալու պատճառով հնարավոր չէր վաճառել արտասահմանում, իսկ հայկական կողմը պատրաստ էր գնելու այդ բամբակը, որը Հայաստանում մաքրվում էր, բերվում ապրանքային տեսքի և այնուհետև վաճառվում Հայաստանի սահմաններից դուրս:

¹⁸ Տե՛ս «Խորհրդային Հայաստանը թվերով (1923-1927 թթ.)», էջ 235:

ГРИГОР БАЛАСАНЯН – Из истории армяно-турецких торгово-экономических отношений (1923–1927). – История армяно-турецких торгово-экономических отношений представляет определённый интерес. Находясь в качестве члена Закавказской федерации в составе Советского Союза, Армения по-прежнему поддерживала торгово-экономические отношения с другими советскими республиками и соседними странами. Хронологические рамки исследования связаны с тем, что до 1927 г. в Закавказской федерации существовал комиссариат внешней торговли, а после 1927-го его преобразовали в Закавказское полномочное представительство внешней торговли Советского Союза.

Проделав большую работу, армянское руководство наладило торгово-экономическое сотрудничество с Турцией. Это позволило приграничным районам республики экспортировать в Турцию свою сельскохозяйственную продукцию, особенно зерно, и ввозить оттуда различные товары, в частности соль и хлопок. В установлении и развитии торгово-экономических отношений были заинтересованы также приграничные районы соседней страны, поскольку произведённый в Турции хлопок, не имея товарного вида, не мог экспортироваться, армянская же сторона была готова закупать неочищенный хлопок, очищать его, а потом перепродавать за границу.

GRIGOR BALASANYAN – On the History of Armenian-Turkish Economic and Commercial Relations (1923-1927). – The research on the history of Armenian-Turkish economic and commercial relations has aroused some interest. First of all it is because of the fact, that being included in the the Soviet Union as a member of Soviet Socialist Republic of Transcaucasia, the Government of Armenia continued its economic and commercial relations with the other Soviet republics and with its neighbouring capitalistic countries, both as a member of Transcaucasian Federation as well as separately. The choice of the research chronology is associated with the fact, that before 1927 there had been a Commissariat of Foreign Trade in the Federation of Transcaucasia, and after 1927 it was reformed into the Transcaucasian Plenipotentiary Representation of the foreign trade of the Soviet Union.

The authorities of Armenia together with the ArmenTrade did a good work to establish economic and commercial relations with Turkey. This let the frontier regions of Armenia sell agricultural goods (especially corn) in Turkey and import different goods (especially salt and cotton).

The officials of the frontier regions of Turkey were also interested in establishing and developing the economic and commercial relations. Generally it was associated with the fact, that cotton, produced in Turkey, had no marketable style and it was impossible to sell it abroad, and the Armenian side was ready to buy not cleaned cotton, clean it and then resell it abroad.